

**ՀԵՏԱՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՄԱՏԵՂ ԿՈՄԻՏԵԻ
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄ**

29 ապրիլի 2015թ. Բոյուսել

Հարգելի գործընկերներ

Թույլ տվեք ողջունել համատեղ կոմիտեի երկրորդ հանդիպման մասնակիցներին և ներկայացնել Երևանում կայացած մեր հանդիպումից հետո տեղի ունեցած զարգացումները ինչպես բուն համաձայնագրի կիրարկման ընթացքի, այնպես էլ ՀՀ միգրացիոն քաղաքականության և օրենսդրության կատարելագործման վերաբերյալ:

Սեպտեմբերին կայացած հանդիպման ժամանակ իմ կողմից ներկայացվեցին այն քայլերը, որոնք իրականացրել էր ՀՀ կառավարությունը Համաձայնագրի պատշաճ մակարդակով կիրարկումն ապահովելու նպատակով: Դրանք վերաբերում էին ռեադմիսիոն հայցերի քննարկման ներքին օրենսդրության մշակմանը, գործընթացում ներառված պետական տարբեր մարմինների ներկայացուցիչների ուսուցմանը և այլ հարցերի: Այսօր ես կարող եմ հայտարարել որ այդ աշխատանքները ծառայել են իրենց նպատակին, և Համաձայնագրի կիրարկման հետ կապված որևէ խնդիր առ այսօր չի առաջացել, կարծում եմ այդ մասին կարող են վկայել նաև մեր եվրոպացի գործընկերները:

Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց ի վեր՝ 2014թ. հունվարի 1-ից սկսած մենք ստացել ենք 97 ռեադմիսիոն հայցեր՝ 234 անձանց վերաբերյալ, որոնցից 147 անձանց քաղաքացիությունը հաստատվել է, 71 անձանց վերաբերյալ տեղեկություններ չեն գտնվել: Հայցերը ստացվել են երկու երկրներից, Շվեդիա՝ 80 հայց և Լեհաստան՝ 17 հայց:

Ստացված ռեադմիսիոն հայցերին Համաձայնագրով սահմանված կարգով ընթացք տալուն զուգահեռ, շարունակել ենք Համաձայնագրի կիրարկման ընթացքը հեշտացնող և դրան նպաստող միջոցառումների իրականացումը: Մասնավորապես՝

- 2014թ վերջին ՄՄԿ հայաստանյան գրասենյակի կողմից տպագրվել են երկու ձեռնարկներ որոնցից առաջինն իրենից ներկայացնում է ուղեցույց և ուսուցողական նյութեր հետընդունման գործընթացում ներառված պետական մարմինների պաշտոնյաների համար, որը մշակվել է տեղացի փորձագետների ուժերով, իսկ երկրորդը՝ միջազգային փորձագետի կողմից կազմված հետընդունման վերաբերյալ վերապատրաստման ձեռնարկ է: Երկու ձեռնարկներն էլ տպագրվել են թե հայերեն և թե անգլերեն լեզուներով, իսկ վերջինն ունի նաև սկավառակ:

- 2015 թ. հունվարին ռեադմիսիոն հարցերով Թբիլիսիում կայացած տարածաշրջանային կոնֆերանսի ընթացքում, տեղեկացել ենք Վրաստանում ներդրված <Ռեադմիսիայի դեպքերի էլեկտրոնային կառավարման համակարգի> մասին: Համակարգը Հայաստանում ներդնելու հետ կապված ֆինանսական խնդիրները լուծելու նպատակով ներկայումս բանակցություններ ենք վարում Հայաստանում ԵՄ պատվիրակության հետ:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք է տրվել Համաձայնագրի կիրարկումն ապահովող Արձանագրությունների նախագծերին որոնց թիվն արդեն հինգն է: Դրանցից երկուսի՝ Բենիլյուքսից և Էստոնիայից ստացված նախագծերի տեքստերը կարելի է համարել համաձայնեցված և ստորագրման համար պատրաստ:

Օգտվելով առիթից, ցանկանում եմ Ձեզ տեղեկացնել նաև ՀՀ միգրացիոն քաղաքականության և օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ իրականացված այն աշխատանքների մասին որոնք առնչվում են ինչպես ռեադմիսիայի թեմատիկային, այնպես էլ անօրինական միգրացիայի դեմ պայքարի ընդհանուր հարցերին, միգրանտների Հայաստան վերադարձին և ապաստանի կատարելագործման հարցերին: Այսպես՝

- Ակտիվ աշխատանքներ են տարվում ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 17-ի որոշմամբ հաստատված <<< միգրացիայի ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշներին այդ թվում՝ Եվրամիությունում ընդունված մոտեցումներին և սկզբունքներին համապատասխանեցնելուն ուղղված գործողությունների 2014-2016թթ ծրագրից> բխող միջոցառումների իրականացման ուղղությամբ: Հիշեցնեմ, որ այդ ծրագրով միգրացիոն օրենսդրական դաշտում նախատեսվում է իրականացնել 78 գործողություններ և այդ ծրագիրը մշակվել է ՀՀ կառավարության կողմից միգրացիայի ոլորտում 2012-2016թթ.. համար հաստատված Գործողությունների ազգային ծրագրին համապատասխան, և վերջինում ներառված են 147 կոնկրետ գործողություններ:
- 2014թ. սեպտեմբերին ՀՀ կառավարությունը հաստատել է <http://www.tundarc.am> տեղեկատվական ինտերնետային համակարգի սպասարկման կարգը: <Տունդարձ> բառը հայերենից թարգմանվում է որպես <back to home> և կարծում եմ այդ բառը լիովին արտահայտում է այդ կայքի նպատակներն ու խնդիրները:
- 2014թ.-ի դեկտեմբերի 17-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է <Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին> ՀՀ օրենքը:
- Առաջին արդյունքներն են արձանագրվել 2014թ. հունիսի 21-ին ընդունված <<< քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին> ՀՀ օրենքի

շրջանակներում, որով, նոր հողվածի ներմուծմամբ անլեգալ միգրացիայի կազմակերպումը որակվել է որպես քրեորեն պատժելի արարք: 2014թ. ընթացքում այս հողվածի հատկանիշներով, կազմակերպիչների նկատմամբ հարուցվել են 3 քրեական գործեր:

- <Փախստականների և ապաստանի մասին> ՀՀ օրենքի նոր նախագիծը մարտին հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և այն ներկայումս գտնվում է Ազգային ժողովում: Նախագիծը մշակվել է ՄԱԿ ՓԳՀ-ի հետ սերտ համագործակցությամբ:
- Առաջիկայում կսկսվի ԵՄ-ի ֆինանսավորմամբ ICMPD-ի կողմից իրականացվող “Support to Migration and Border Management” ծրագիրը, որի արդյունքներից է լինելու ապաստան հայցողների համար նոր ժամանակավոր կացարանի կառուցման նախագծային փաստաթղթի մշակումը (investment plan), և որի համար կառավարությունը տրամադրել է Երևանամերձ շրջանում անհրաժեշտ հողատարածք: Մենք այսօրվանից պետք է մտածենք մշակված investment plan –ին համապատասխան ֆինանսական միջոցների հայթայթման մասին:

Ամփոփելով իմ խոսքը, կցանականայի մեկ անգամ ևս շեշտել որ Հայաստանի կառավարությունը հավատարիմ է միջազգային համաձայնագրով իր ստանձնած պարտավորությունների կատարման հարցում և անում է հնարավորը դրանք լավագույնս իրականացնելու համար: